

Առտու մը կանուխ երբ Ս. Երրորդութեան աւագերէցը, Տ. Մկրտիչ Յովհաննէսեան, բանկալը մտաւ, լուրը մինչեւ ժամկոչին ու բարպանին ահանջը հասած էր :

— Մարկոս էֆէնտիք աղբիւն ալ կը կարգուի կոր Մարզպըլըքեանի հետ, ըսաւ բարպանը խօսքը աւագերէցին ուղղելով :

— Ի՞նչ կ'ըսես, գոչեց Տ. Մկրտիչ զարմացած :

Տէր Մկրտիչ Յովհաննէսեան Մարկոս ազայե տաներէցն էր. երկու շարաթ առաջ Ռոտոթօ՛ իր ծննդավայրը գացած էր եւ առջի իրիկունը վերադարձած էր Պոլիս, հետեւաբար զեռ ժամանակ չէր ունեցած տեղեկանալու օրուան լուրերուն :

Այս լուրը անհաճոյ անակնկալ մը եղաւ իրեն համար, միշտ ենթադրած էր որ Սաթենիկի ամուսնութիւնը իր ձեռքով պիտի կատարուի ու ինք պիտի ստանայ միջնորդչէքը, եւ ահա որքը փխձած էր ձեռքին :

— Եղաւ լինցա՞ւ, նշանը տուի՞ն, հարցուց ձայնով մը զոր կը ջանար անտարբեր ցոյց տալ :

— Լինցածի պէս բան մըն է... զորքը եփողն ալ կուրեանն է :

— Կուրեան... Ասիկա լատի մը պէս իջաւ Տ. Մկրտիչի գլխուն :

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

(Շարունակելի)



ՊԱՏՃԱՆՈՐԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԲԱՐՍՅԱԿԱՆԻ ՄԷՋ

— 00 —

Պատճառորականութեան մասին մեր առաջին յօդուածին մէջ (') ապացուցինք թէ մտաւորական, բարոյական, մէկ կ'ստեղծով՝ հոգեբանական բոլոր երեւոյթները կը հպատակին այն տիեզերական օրէնքներուն որոնք կ'իշխեն ուրիշ ծանօթ ասի՛ն կարգի երեւոյթներու : Գիտենք թէ չկայ ո եւ է հոգեբանական իրողութիւն մը որ չունենայ իր առաւել կամ նուազ բացայայտ պատճառը եւ որ մատուցած ըլլայ կամայական ուժի մը անկախ քմահաճոյքին : Այս յօդուածին մէջ պիտի զննենք թէ ինչ հետեւանքներ ունի այդ վարդապետութիւնը բարոյականի սահմաններուն մէջ :

Շատ իմաստասէրներ, պաշտպան աղատակամութեան, չկարենալով հերքել պատճառորակ-

(*) Տես Անտիֆոն, Ա. տարի, Թիւ. 8, 9—10

կանութեան գիտական ամուր հիմքերու վրան հաստատուած փաստերը, ուղած են զայն գինաթափել (déprécier) ամենամեծ թերութիւնները գտնելով անոր կիրարկութիւններուն մէջ :

Նախ եւ առաջ պէտք է ըսել թէ գիտական ճշմարտութիւն մը կարելի չէ իր աղբիւնքներէն դատել՝ կարելի չէ դատապարտել կամ անընդունելի նկատել զայն՝ անոր վնասարեք կամ իրեք աչք համարուած հետեւանքներուն վրայ հիմնուելով միայն : Ի՞նչ կ'ըսէր քնադէտ մը, եթէ չուզէինք ընդունիլ ըլնքտրակալութեան գոյութիւնը, որովհետեւ կայծակը՝ որ անոր շտափելի մէկ արդիւնքն է, մեծ ազգաքննի յոսանջ՝ մեզ պիտի պարզապէս տղէտ կամ յիմար պիտի նկատէր : Արդարեւ, մեր կաթը, մեր գիտականութիւնը ոչ մէկ կերպով չի կրնար ազդել քնական կամ բարոյական աշխարհի ճշմարտութիւններուն վրայ եւ զանոնք բարկութիւն՝ Այդ աղբիւնքներու օգտակարութիւնը կամ վնասակարութիւնը յարաբերական բաներ են, մարդկային անմուկ շահերուն սեռայէտով միայն նշանակութիւն ունին : Գիտութիւնը անհնապէս զերիկեր է այդզեղեղաբար շնորհողութիւններէն, եւ զայն կարելի է ներկայացնել անողք, անմատչելի եւ անկարելի մօր մը պատկերով, մայր մը որ նոյն սիրով կը սիրէ, նոյն զորովով, նոյն խանդավառանքով կը շքապատէ իր արգանքին բոլոր պտուղները անխորաքար, ինչ որ ալ ըլլայ իր սօքին առջեւ սողացող մարդկութեան զնահատութիւնը անոնց իւրաքանչիւրին նկատմամբ : Սակայն այսու հանդերձ, մեր այս յօդուածով նոյն պիտի տանք թէ այդ վնասարեք արդիւնքները յաջող չեղանք չեղանկներու մտքին մէջ միայն գոտթիւն ունեցած են, թէ ընդհակառակն այդ մեծ ճշմարտութեան, այդ փրկաւէտ վարդապետութեան արդիւնքը ուրիշ բան չէ բայց թի՛ք ամենամեծ բարիքները՝ բարոյականի տեսակետով :

Մի առ մի յիշատակենք պատճառորականութեան հակառակորդներուն առարկութիւնները, վերլուծենք զանոնք՝ եւ անոնց ունայնութիւնը իսկին հերեւան պիտի գայ :

Նախ եւ առաջ, ի՞նչ պէտք է ըմբռնել «բարոյական» բառով, Թերեւս այս հարցումը բոլորովին որոյշական պիտի թուի մեր ընթերցողներուն, սակայն եւ անպէս հարկիւն է որ անոր նշանակութեանը մասին բացարձակապէս համամիտ ըլլան մեզի՝ որպէս զի կարեւորն է մասնաւոր որովհետեւ մեր հակառակորդները մեզմէ բոլորովին տարբեր կերպով կ'ըմբռնեն բարոյականը :

Անոնց կարծիքով բարոյականը մարդկային
 մայր սերունդին ստորագրելովնրանքն մին է որ
 մարդը կը զանազանէ կենդանիներէն : Բարիքն
 ու չարին դիտակցութիւնն է ան, զոր Արարիչը
 դրած է մեր հողիին մէջ, անյնզիլ օրէնքննրու
 վրայ հաստատելով զայն : Նոյնն է ան ամէն
 մարդու համար , ինչ որ ալ ըլլալ ցեղը որուն
 կը պատկանի : պատմական կամ առարկայատմա-
 կան՝ ժամանակը ուր կ'ապրի կամ ապրած է,
 երկիրը որ անոր օրօրանն է եղած :

Միւսնոյն գերագոյն ձեռքն է որ անջնջելի
 տառերով քանդակած է զայն անմահ օրինաբար
 մը մէջ ի պէտս համակ մարդու թիւան : Գալով
 այն խնդրոյն թէ բարի՞ կամ չար կը ընէ մարդ
 անա թէ ինչ է մեր հակատակորոշութիւնն կար-
 ծիքը : Ոմանք աստուածային անհուն բարու-
 թեան վրայ հիմնուելով , կ'ընդունին թէ մեր
 հողիին մէջ ունիւրք բարիին սկզբունքը , իսկ
 չարին ազդելը գոյու թիւն չունի է որ մէջը,
 թէ Չարը ուրիշ բան չէ բայց իմէ մարդկային
 անկատուութիւնը հասնելու աստուածային
 անհուն կարողութեան որ մեր մտադրպայնն է,
 եւ զայն իրազործելու : Եկիին կիողն է որ
 այս բմբուսու մը յղացած եւ զայն երկարօրէն
 պարզած է իր «Դաստիարակութեան վրայ»
 ամենազոզող գրքովին մէջ , գրքովի որուն
 այս տեսութեանը համախոհ չենք բայց զոր
 կ'ուզէինք ամէն կին կարգար մայր գառնակէ
 ստաջ , գրքովի մը ուր հեղինակը կ'ին եւ մայր
 միանդամայն , օժտուած արաթիպանք մազով
 եւ հոգեկանն ու մտաւորական ամենաբարձր
 յատկութիւններով , իրենց պիտի մատակարար-
 րէր ոչ թէ նոյնքանական կամ մանկավարժական
 չոր , վարդապետական «թէ որիներն , այլ մայրա-
 կան ամենախորին եւ անկեղծ յուզումներով ,
 զարմանալիները նստակուսութեամբ , ամենանշարժ
 դիտողութիւններով համուսուած , ամենէն հո-
 սուս , ամենէն որոտոր , ամենէն ճկուն ռճով զրուած
 ընտանեկան նամակներու անասելի պարզօրը :
 Ուրիշներ՝ որոնք մեծաճանտութիւնը կը
 կազմեն մեր հակատակողներուն մէջ , կ'ըն-
 գունին թէ մարդ ոչ չար կը ծնի ոչ բարի ,
 թէ երբ չափահաս կը դառնայ , իր առջեւ կը
 գտնէ ամէն առիթի մէջ երկու ճամբաներ ,
 որոնցմէ մէկը զէպ ի Բարին կ'առաջնորդէ
 զայն եւ միւսը զէպ ի Չարը , եւ ան սղատ է
 միջոց բոս կամ այդ երկու ճամբաներէն մէկը
 կամ միւսը ընտրելու :

Ինչպէս կ'ըմբռնուրք մենք , պատճառաբա-
 կաններու բարիքն ու չարիքն զգացումը :

Մեր նախարդ յօդուածին մէջ պայտուցինք
 թէ մեր մտաւորական եւ բարոյական կարողու-
 թիւնները արդեւնք են երկար զարեբու ընդ-
 մէջէն նախանիւթին զգայնութեան յատկ-

խաղաց զարդ - ցմանը , ուստի եւ կենդանին
 բուն մէջ պէտք է փնտտել այդ բարոյա-
 կանի աղբիւրը եւ անոր զարգացման , անոր
 յամբ բարեշրջութեան յարգական աս-
 տիճանները Արդարեւ քանի որ զեռական հի-
 մերու վրայ հիմնուելով կ'ընդունինք թէ
 կենդանիները եւ մարդ նուազանէ կը զար-
 գանան , կը կերպարանափոխուին անընդհատ ,
 թէ անոնց ապրելու եղանակները կը բարեփո-
 խուեն անզաղար , թէ նորանոր պահանջներ ,
 նորանոր սովորութիւններ կը ծնին , բնական
 է որ պէտք է ընդունինք թէ բարոյականն ալ
 որպէս զի կարևորայ պատշաճիւ այդ յարափո-
 փոխ մարդութեան յարգական վիճակնե-
 ռուն պէտք է որ զուգանեաբար փոփոխու-
 թիւնները կրէ , մէկ խօսքով բարոյականը կը
 հպատակեաբար ընթացութեան փոփոխական օրէն-
 քին , ուստի եւ չի կրնար անյեղին անփոփո-
 խելի բան մը ըլլալ : Մեր անջնջ զգացումները ,
 մեր բողոք հոգեկան կիբքերը որոնք մեր բա-
 րոյականը կազմող տարրերն են , իրենց աղ-
 քերէն ունին կենդանիներու ճով , աւելի կամ
 նուազ տարբական վիճակի մը մէջ : Երբ նախ-
 նական մարդոց մէջ փոքր խմբուներու տեղի
 ունեցած են , կըր արդարեւ ընկերու-
 թեան հիմն է դրած , եւ իր նմաններու հետ յար-
 ցանքով թեան մտնելով՝ պարտաւորուած է իր
 զգացումները , իր կիրքերը չիման մէջ դնել
 իր նմաններու նմանօրինակ զգացումներուն
 եւ կիրքերուն հետ , եւ այդ ամենքը՝ մասնա-
 շարդայն անհատական շահէն մղուած՝ անհա-
 բող կ'զգած են երկար ասուս հայտ ապրել ,
 այն ժամանակն է որ այդ մարդկային սազմ-
 նաձևը ընկերութեան կազմուածքին մէջէն
 ամենէն հզօրը , ամենէն ճարպիկը , ամենէն խե-
 լացին գերակշռութիւն տուած է իր խօսքին ,
 իշխած է իր խմբակցիներուն վրայ , հայտա-
 բար դարձած է անոնց միջեւ ու իր վիճակները
 եւ խորհուրդները օրէնքի կարգ են անցած
 փոքր առ փոքր Այդպէսով ծնած է օրէնագրու-
 թիւնը որ մարդկային արարքներուն տուած
 է իրենց արտաբնական նշանակութիւնը , նը-
 շանակութիւն որմէ զուրկ է ամէն արարք ,
 երբ վերացուի կեբբով ի նկատի անննք
 զայն :

Գանի մը օրինակներ շօշափիլի պիտի զար-
 ձընեն մեր այս ըսածը :

Անջաղաքակիրթ մարդը վայրագ է . վայրա-
 գութիւնը ինքնին , վերացականապէս նկատու-
 զութեան անուսելով , կարելի է չար համարել .
 բայց բնքը այդ վայրագ էակը յարաբարաբար
 զարգացած ընկերութեան կազմուածքի մը
 մէջ , եւ իսկոյն վայրագութեան չար նկարա-
 գիրը երեւան կուզայ :

Նախնական ընտանիքին մէջ, որ այժմեան բազմաթիւ ընկերութեան առաջին հիւրը կը ներկայացնէր, ընտանիքի պէտքը, այսինքն այլ մարդը, կեանքի ու մահու իրաւունքը ունէր իր կ'տղ կ'ըր զաւանդակու վրայ: այն ատեն այլ բաւական չէր շատ բնական կը թուէր ևս վերացեալ կերպով քննուելով չէր կրնար չար նկատուիլ, բայց երբ ընկերութիւնը կազմակերպուի սկսած է, երբ վերոյիշեալ կերպով օրէնսգրութիւնը ծնունդ տաւ և կատարելապետութեամբ է՝ հիմնուելով այրեւս ոչ միայն անհատական այլ ևս ընկերական հանրային շահերու վրայ, երբ ընկերութիւնը պէտք է ունեցած բազմաթիւ բաղադրանքներու յետեւ կ'ուրեւնայ: Կամար ևս իր յայտնութիւնը սկսած է ստորադասուիլ բազմաձեւութեանը և ցեղին բազմաթիւութեանը, այն ժամանակ կ'ըսենք, բնկերական օրէնսգրութիւնը կ'նոյ կ'ու աղաքներու իրատանց տաշտպան է հանդիսացած և հօր ձեռքէն խլած է դերիշխան կարողութիւնը որ մահու և կեանքի իրաւունք կուտարանոր իր ընտանիքի անդամներուն վրայ: Այս իրողութիւնը կը տեսնենք մեծ, աշխարհակալ և պատերազմասէր ժողովուրդներու պատմութեանը մէջ, ինչպէս օրինակի համարժեցութեանստանի պատմութեան մէջ:

Այսպէս ուրիշն կը տեսնենք թէ նոյն իրողութիւնը ընկերութեան ասարթը զարգացում ունեցող քաղաքներու մէջ բոլորովին ասարթեր նշանակութիւն կը ստանայ և ասարթեր կերպով կը դասուի:

Կ'ուզէք օրինակ մը անցնող զարու պատմութիւնէն: Աւստրալիականութիւնը երբ տիրութեան կերպով կ'իշխէր Փրանսիայի մէջ, ոչ ոք կը խորհէր անոր դէմ ձայն բարձրացնել, թէ՛ ընկճողները և թէ՛ ընկճուողները այնքան բնական կը դատէին զայն: Իրերու այդ վիճակը տեսնել մինչև որ նոր պահանջներ երեւան կ'ելուի, նոր ցանկութիւններու, նոր բաշտանքներու ծնունդ տուելու և Ծարվիկի ու Վոլթիոթի հանճարով ձուլուած, Միլրայոյի ամենի և հզոր ձայնով պատպանուած բարոյականին նոր ու յայն ընթացքում մը, այն է հասարակապետութեան սկզբունքը, աւատական իրականներն իրեն ժողովուրդը կաշկանդող ընտանորեն նկատուի տուու:

Ի՞նչ կարող ենք հետևել ինչպէս այս օրինակներէն. սա միայն թէ՛ ո եւ է արարք մը ոչ բարի է և ոչ չար, թէ՛ ընկերական յօրեւտածութիւններու մէջ է որ մարդային արարքներն իրենց այդ յարաբերական արժէքը կը ստանան, ծնունդ տալով ընկերական տեսակետով օչ ոսկար կամ վնասակար, ախորժիկ կամ անխորժ հետեւանքներու:

Ան ուրիշ օրինակ մը. Լաքոններու ժողովուրդը ծնողները խոր ծերութեան հասնելով այլևս անկարող կ'ըլլան իրենց արդուստը հայթայթելու, մեծ հանդէսով կը սպաննեն զանոնք: Ան տարբար մը որ մեր անտիկէտով չարագործն պարտաւել է, քանի որ ծերութեան անկարներու համար մասնաւոր հաստատութիւններ կը հիմնուի, կը ստուգանքը զանոնք և ամէն կերպով կը ջանասքը անոնց տանջանքները մեղմացնել և կուսնը երկարել, բայց Լաքոններու համար այդ արարքը չափազանց բնական արարք մըն է և կը բայց աստիճանապէս օգտակար և կարելի է ըսել անհրաժեշտ արարք մըն է, որովհետև այդ ստուգանք պատ և կարելիս հողին վրայ, ուր անոնցը այնքան հարգաւարտ է և և անջնայ զտարութեամբ ձեռք կը հզուի, այն անձը որ չի կրնար ինքն իրեն բաւել, ամենամեծ ընտ մը կը դասուի ընկերութեան որ այնքան աստիճանի կերպով կ'ապրի արդէն, հետեւաբար այդ անողուտ ընտանիքը անհետացնելու սովորութիւնը բոլորովին բնական կը թուի այդ դեղերուն մէջ:

Ուրիշն բարոյականը մեզի համար էականապէս փոխիական ասար մըն է, բարեբաւութեան տիրողական մեծ օրէնքին ենթարկուած, որ կը զարգանայ մարդկային ընկերական բարեբաւութեան զուգահեռական կերպով և որ՝ արուած ըլլալով ընկերական յօրեւտածութիւն մը (organism social) որոշակ պատմական շրջանի մը մէջ, կը ներկայացնէ ոչ միայն այդ ընկերութեան ամբողջութիւններուն, պայմանագրութիւններուն, ըստըրուհի, զորեւորութեան ամբողջութիւնը, այլ և այդ պարուն հետաքնն և կանխախարձակ մտքերու ներքինապետութեան կազմուած մատուցար մը՝ որուն անդու կը ձգտի մարդկութիւնը և որ յարող զարեւուն մէջ տակա կ'իրագործուի:

Տղաքներուն բարի կամ չար ծնունդը զաւրտանալով է պատմաութեանը կանխախարձակ կարծիքը: Տղաքները կը ծնին միանգամայն չար և բարի յատկութիւններով օժտուած, ոչ ամբողջապէս հրէշներ և ոչ ալ կատարեալ հրէշտակներ: Արգարեւ, դիտութիւնը մեզի ցոյց կուտայ թէ՛ սաղմը իր արգանդային կեանքի զարգացմանը մէջ, յարողաբար կ'ընտանական սանդուղին հետզհետէ ասելի բարձր աստիճաններուն վրայ դասուած կենդանիներու ձեւը կը զգենու, մինչև որ վերջապէս հասնի իր ծայրագոյն կէտին, այն է մարդկային սեռի կերպարանքին:

Միւս ժամանակ, տղան, իր զարգացման ընթացքին մէջ հասած է մարդկային վարքերի ցեղերու վիճակներ, այնպէս որ անոր նկարա-

գիրը, բնութիւնը, այդ վայրենիներու բնութեանը կը համազօտատեսանէ՝ ուստի և անոր մօտ կը գտնուի չարը՝ մեր սեռակէտով, Բայց պէտք է ի նկատի առնել թէ Ժամանակակիտութեան արեւելեան օրէնքին շնորհիւ անոր բնութեան մէջ կը գտնուի նմանապէս քաղաքակրթութեան ազդեցութիւնները որոնք մեր սեռակէտով բարին կը կարծենք ։ Հետեւաբար, տղուն մօտ կը գտնուի բարի և չար հակումներ մէկը միտքին քով, հակումներ ուրոնք վրայ առելի երկրօրօրէն պիտի ծանրանանք մեր դաստիարակութեան վրայ գրելիք յօդուածներուն մէջ ։

Ինչ որ ալ ըլլայ այդ բարոյականը, ինչ որ ալ ըլլայ այդ մասնաբաժնի որուն կը ձգտի մարդիկութիւնը, տեսնելը արդեօք թէ պատճառաբանութեան կրնայ խոչընդոտ հանդիսանալ, ինչպէս կ'ըսեն մեր հայտարարողները, ոչ միայն այդ մտատեղարն իրադրոծիլու, այլ նոյն իսկ այդ ձյուտմն անշամու նկատու : Արդարեւ մեր հակառակորդները կ'ըսեն մեզի : «Ըստ որում կ'ընդունիր թէ մարդս ազատ չէ ընկելու ինչ որ կ'ուզէ, բարոյագիտութիւնը, օրէնսգիտութիւնը բոլորովին աւելորդ քանի որ, քանի որ մարդու մեծամասնութիւնը չպիտի կարենայ հետեւիլ այդ գիտութիւններու աւանդած ճշմարտութիւններուն, չպիտի կրնայ դանձը կիրարկել, նմանապէս երբ մարդիկ գիտանա թէ անկարող են գանձը կիրարկելու, չպիտի կըրնան այդ նպատակին համիլ, ուստի և կամըք պիտի տկարանայ, զլատուի են ջնջուի նոյն իսկ ։ Միւս կողմանէ, անոնք որ կարող ըլլալով հանդիւծ պիտի ուզեն ազատ մնալ ընկերական պատահական, պիտի առարկեն թէ անկարող են այդ օրէնքներուն հետեւելու : Այդպէսով պիտի ջնջուին միանգամայն պատասխանատուութիւնը, ընկերական նիւթական և բարոյական բարօրութեան և խաղաղութեան այդ մեծ գրասկանը ։ մեծարանքը, պարսաւը, պատիւը և անարդանքը, ընկերական բարոյականացման այդ մեծ խթանները անտի բառեր պիտի դառնան, և իբր հետեւանք այդ ամենուն, ամէն բարի, բարձր գաղափարներ պիտի ընկուպուին անբարոյականութեան ովկէանին մէջ, ամենէն ամբողջ, ամենին անմտայն ինչպարզիբնիկ անգամալ, զի պիտի տան այդ մարդկային դարչանքները քշող տանող բաղիտութիւն »

Բնական է որ կ'իջէ ճշմարտ ըլլար այս ամենը, եթէ երբեք անկարելի ըլլար պատասխանել ծանրակշիտ փաստերու այս հեղեղին, աւելի նախամեծար կը համարէինք ուրանալ քան թէ բնորոշել այդպիսի ճշմարտութիւն

մը՝ որ այդքան արեւաբար հետեւանքներ պիտի ունենար բարոյականի տեսակէտով ։

Բարեբաղդաբար անդէն չնեք բոլորովին այդ մտեցումն յարմարութեան դէմ, և զժուար չէ մեղի համար ցոյց տալ թէ իր հետեւանքներով այդքան զուեւի վարդապետութեան մը չէ որ պայտպան կը հանդիսանանք Արդարեւ մտէն զնենք մի առ մի այդ բոլոր ամբաստանութիւնները և պիտի տեսնելք թէ զԸրպարտութիւններ են անոնք պարզապէս և չեն կրնար զիմարդիկ լուրջ քննադատութեան մը : Մեղի կ'ըսեն : «Քանի որ մարդս ազատ չէ ընկելու ինչ որ կ'ուզէ կամ ինչ որ իրեն կ'ուտուցանեն օրէնսգիտութիւնը և բարոյականութիւնը, այդ օրէնքները և բարոյականի կանոնները անօգուտ և աւելորդ են մարդկութեան մեծամասնութեան համար » Այստեղ դերին է նկատել թէ մեր հակառակորդները մեղ կը ընդդիմեն ճակատադրականներուն (fataliste) հետ : Արդարեւ ճակատադրականը կ'ըսէ : «Արարիչը մեղ այսպէս է ստեղծած, չենք կրնար որբը կերպով գործել, հետեւաբար և աւելորդ է աշխատել : Ամէն ինչ նախախնամուած է աշխարհիս վրայ աստուածային ձեռքով : Ինչ որ տեղի կ'ուենայ՝ գրուած է Արարչի և մեծ հայրուտարին մէջ, ու ո՛չ մէկ փոփոխութիւն ո՛չ մէկ խանգարում չի կրնար տեղի ունենալ իրողութիւններու շարքին, յաջորատութեան, տեղութեան մէջ, մեր ամէն արարքները կը կատարուին մեր ազատ կամքին խաբեպատիւր ազդեցութեան տակ, կ'ուզէ՞ որ ուրիշ բան չէ բայց եթէ նախախնամութեան միջամտութիւնը » : «Նախախնամութիւն» բառը մեղի կը յիշեցնէ զբխտոնէական կրօնքի էական մէկ անարդութիւնը, կրօնքը մեղի կ'ուտուցանէ թէ Աստուած իր ամենաարդարութեամբ նախախնամած է ամէն ինչ, ուստի և գիտէ մեր ապագայ արարքները իրենց ամենէն հետեւորդ, ամենէն թաղուն ամբարձանութիւններուն մէջ, ուստի և մեր կամըք ազատ չի կրնար ըլլալ, քանի որ Արարիչը նախատեսանած է դաշն և կը տեսնելք որ ճակատադրականութիւնը և զբխտոնէական կրօնքը անտեսակէտով բոլորովին նոյն դասանանքը ունին : Բայց ինչ որ յստիանշանական է կրօնքի երկդիմի նկարագրին, սա է թէ ճակատադրականութիւնը քաղութիւն է ունեցած իր վատթար վարդապետութեան հետեւանքներն ընդունելու ։ հետեւանքներ՝ որոնք բազարական պէս անխտափելի են և զոր պիտի պարզանք իսկոյն իսկ ընդհակառակ կրօնքը, հակասելով ինք իրեն, կ'ընդունի միանգամայն ազատակամութեան գասանանքը՝ որ բոլորովին անհաշտ է նախախնամութեան սկզբունքին հետ :

Շատ որոշ է թէ պատճառաւորականութեան դէմ այս առաջին աւարկութիւնը կէտ առ կէտ կը պատշաճի ճակատադրականութեան, քանի որ ճակատադրական է որ ամէն կնի նախա-ասանանուած համարելով, եւ իր ինչքը ան-կարող դասելով աստուածային կամքին մեղա-մտութիւնը խանգարելու կամ յիփոխելու, անդործութեան կը մասնէ ինքզինքը. որ վարդապետութիւնն է ուրեմն որ այսպէսով կը ջլատէ անհատական կամ ընկերական գործունէութիւնը եւ անսուղա կը դարձնէ օրէնս-գիտութեան եւ բարոյագիտութեան գոյու-թիւնը: Մինչդեռ պատճառաւորականութիւնը, որ մարդկային կամքը կը նկատէ իբրեւ ար-դիւնք ներքին կամ արտաքին, ժառանգական կամ ստացիկ շարժառիթներու, ընդհակա-ռայն ամէն կերպով օգտակար եւ բարոյակա-նացուցիչ կը նկատէ բարոյական օրէնքներու գոյութիւնը, պոլիտիկան նոյն իսկ այդ օրէնք-նէրը արտաքին բարոյական շարժառիթներ կը դառնան մարդկային գործունէութեան՝ դր քարկաւելու կը նպաստեն, նոր եւ սրկարար ձգտումներ ասիղծելով մեր հողեկան անմահու-նեցուն մէջ: Փոխանակ մեր կամքը ջլատելու, պատճառաւորականութիւնը կը խթանէ զայն-ցոյց տալով մեզի մեր անկատարութիւնները, մեր թերութիւնները, եւ միւս կողմանէ այն գծուածութիւնները, այն խոչընդոտները ուրոց պէտք է բաղկենք մեզ բարոյագէտ կա-տարելագործելու համար, այսպէսով մեզ կը զորգէ այդ գծուածութիւններու դէմ լալթա-կան կերպով կոտուելու համար հարկաւոր բա-րոյական ուժերով զինելու, որպէս զի մեր անը այդ պայքարին մէջ չընկնի:

Անա այստեղ է որ կը տեսնենք թէ ինչպէս աշխատակամութիւնը արդիւն կը հանդիսանայ այդ բարձր ձգտումներուն իր թմանը եւ անոնց իր արդիւնները: Աշխատակամ ինքզինքը կարող կը կարծէ, ուղիւ մաշտիւնարին, նոյն իսկ ան-մահագծուածին արարքը կատարելու. իրեն համար՝ ոչինչ չի կրնար զիմարել իր կամ-քին. բաւական է որ ուղէ, իսկոյն ամէն զըմ-ւարութիւն, ամէն խոչընդոտ կը հարթուի. ուստի եւ այդ հաւասարով մարդիկ յաճախ ան-չաւական կը գտնին իրենց բարոյական ուժերը, իրենց և ննկարեւոր որոյումներն ի գործ զնելու ժամանակ: Աննիւք օրինակ մը. որ բացորոշ կերպով ցոյց պիտի տայ մեր այս ը-սածին բարարձակ ճշմարտութիւնը, Անա եւ-կու ալքթրամոյնքը. մէկը ընկերական բարձր գառակարգին կը պատկանի, իսկ միւսը ընկե-րութեան մրուրովն է շաղկապ. ամա ի՞նչ կը երկուքին այլ խորհուրդ կուտայ այդ ակտը ջնջել: Անոնցմէ առաջինը ստացած է լաւ դաս-

տիրակութիւնն մը, այնպէս որ կ'ըմբռնէ բժշկին արդիւնումին պատճառները, այն վը-տանգները որոնց ենթարկուած պիտի ըլլայ եթէ շարժուակէ իր այդ մտութիւնը. անոր արտին մէջ զարդացած են բարոյական բարձր զգացումները. իր ընկերական դիրքը. իր նիւ-թական միջոցները, իր ստացած գառակարա-կութեանը հոգեւոր մէջլարդացուցած ճաշակ-ները կրնան ուրիշ զաղուռներ եւ համարժէք վայելքներ եւ հանդիքներ հայթայթել իրեն. իր ժառանգականութիւնը, մէկ խօսքով՝ իր արժող ժառուարական եւ բարոյական անմահ-ւորութիւնը, իրեն թոյլ կուտան այդ ակտը մէկզի ձգելու:

Իսկ ինքնորոշ խեղճ աղքատ գործաւոր, զուրկ ամէն զատախարակութենէ, դիւնմուլ հօր-մէ մը ճեմ, իր արժող կրնալք անբարոյա-կան, ցոփ եւ ամէն տեսակ մոլու-թիւններով ապականուած միջավայրի մը մէջ անցուցած, յոյի օրինակներ միայն ունեցած իր աչքին ուղիւ, եւ որուն միակ ճանդին է եղած՝ ամ-բողջ օրը զբաստի նման աշխատելէն ետքը զինտուն մտնել եւ ջանի մը ընկերներու նետ մեղմացնել իր կեանքի գառնութիւնները ալ-գօյի եւ ծխախոտի թիանք շղփնեցուն մէջ չըլլապատելով զանոնք, բնական է որ այդ եր-կորդին համար բժիշկին խօսքը ունի կարե-ւորութիւնը, նոյն կէտը չի կրնար ունենալ եւ յանձար չկրնալով նոյն իսկ անոր ճշգրիտ եւ իսական նշանակութիւնը եւ կարեւորու-թիւնը ըմբռնել, վերջոյն ալ շարժառիթները յաղթական կ'ըլլան այն պայքարին մէջ զոր կը սկսին բժիշկին սուած խորհուրդին յառա-քներած արտաքին բարոյական շարժառիթին դէմ, եւ գործաւորը կը շարունակէ անմահ-տուր ըլլալ եր բարոյագեղծ մտութեանը:

Եթէ այս պարագային մէջ բժիշկը պատճառ-ւորական է, լաւ կ'ըմբռնէ որ եթէ երբեք այդ գործաւորը չէ հետեւած իր խորհուրդին, պատ-ճառը այն է որ այդ վերոյիշույլ պայքարին մէջ իր արուած խորհուրդին յառաքներած բարոյական շարժառիթը շատ ակտը է եղած, կ'ըմբռնէ թէ անհրաժեշտ է այդ բարոյական շարժառիթը զօրացնել եւ համապատասխան ընել զայն իրեն զինարդող զժուարտութիւն-ներու եւ խօշընդոտներու մեծութեանը, եւ փոխանակ մէկ անգամ խորհուրդ տալով զո-հանալու, կը ջնանայ բազմազան եղանակնե-րով անոր երեւակայութիւնը սպաւորելու, անոր օրինակներ տալով, ալքթրամոյնքեան անհամար աշխատներուն մասով զպիլը տալով անոր եթէ կարելի է այստեղ ըսել, անոր ցոյց տալով ալքթրամոյնքու գիականութեան վը-րայ՝ անոնց ստամոքսին, անոնց լեարքին, անոնց սրտին եւ երակներուն կրած խորին եղծուները, այնպէս եւ այդ ամէն ծանօթու-

թիւնները՝ արտաքին մտաւորական շարժառիթներ կարեւորն քաւաւան շորաւոր ըլլալ յաղթելու անոր մուտքեանը, որ ներքին ֆիզիքո-բարոյական շարժառիթ մըն է: Մինչ-գեռ պատահամը՝ որուն համար շարժառիթները ստաւ կարեւորութիւն չունին, փոխանակ այդ թշուառ գործաւորին մօտ՝ որ չէ կըրցած բժշկին խորնորդին հետեւիլ, մտաւոր եւ բարոյական անկարողութիւն տեսնելու, բարի կամքի պակասութիւն կը տեսնէ, զայն կը պարտաւ եւ անապօան կը դատէ զայն իր բարեացակամութեան առարկայ ընելու:

Այստեղ կը ներկայանան պատասխանատուութեան, պարտաւի, գովեստի, արժանիքի անարժանութեան խնդիրները՝ դորձեզ յայդորդ յորդանով մը մանչամասն պիտի քննենք, հետեւաբար եւ չնէք ծանրանար առ այժմ անոնց վրայ: Նկատել կ'ուտանք միայն թէ պատճառաբանքը հաւատարմապէս դորձելով այնպէս ինչպէս դործել կուտայ իր դաւանան մարդպետութիւնը, քնական կերպով բարոյականացնել կը ձգտի այդ դորձաւորը վերջնապէ մասնաւոր պարարային մէջ: Իսկ ընդհակառակն ազատակամ նոյն պայմաններու մէջ դործելով ոչ մէկ ջանք չ'ընել այդ թշուառ եւ կը բարոյապէս բարձրացնելու:

Ան արդիւնքը գտնեցէ՛ք: Առանց առ այժմ երկարորէն ծանրանալու պարտաւի գովեստի, արժանիքի, պատիժի, պատասխանատուութեան խնդիրներու վրայ, պէտք է սակայն ցոյց տանք թէ պատճառաբանութիւնը քնու չի ջնջիր գանձը, որովհետեւ արտաքին բարոյական շարժառիթներ են մարդկային դործունէութեան, եւ իր ան՝ կը նրպասեան ընկերական բարոյականացման ամեկնակարեւոր դործին իրականացմանը: Ընդհակառակն ճշմարիտ ազատակամը, ինչպէս սուստիք, աւելորդ կը համարէ պարտաւել, գովել, քաջալերել: Գտնի որ մարդկային կամքը ազատ է եւ հակառակ այդ գործուն, կընայ իր ընտրած ուղղութեամբը պիտի առլ մեղք: Ոչ թեմն այն ամէն ամբաստանութիւնները ամեն կերպով կը պատշաճին մեր հակախօսներուն:

Համառօտ կերպով տեսնենք այժմ թէ ուրիշ ի՛նչ մեծ թերութիւններ ունի ազատակամութիւնը, թերութիւններ՝ որոնք զանց բուրբողին բարոյաղիզ վարդապետութիւն մը կը զարթնեն: Մոյց տանք նմանապէս այն ամենամեծ բարեքնելու աղբիւրը որ կը ծնի պատճառաբանութեան ընկուսն եւ փրկաւէս ծոցն:

Նկատենք ազատակամ մը ընկերական յարաբերաբար զարգացած յօրինուածութեան մը

մէջ: Իր ընտր բարեկամները զայն կը ճանչնան իրեն պատուաւոր անձ մը, լաւ կըրթեաւ, բարձր գաստիարակութիւն ստացած, մտաւորապէս եւ բարոյապէս զարգացաւ միջավայրի մը մէջ մտցած եւ սպրճեց բայց զիտեւք որ եթէ բա. ի է ան, պատուաւոր եւ բարեկիրթ, մինչև. այժմ պատճառք այն է որ ուղղած է աղպէս ըլլալ, իրը շարժառիթ կը կամեն ունենալով միայն. հետեւաբար ոչ ինչ կընայ մեղ ապահովցնել թէ պիտի շարունակէ իր այդ անխնայքը, թէ չպիտի չեղի այդ ուղիվ ճամբէն զոր ընտրած է մինչև այժմ, հետեւաբար ոչ ոք կընայ անպայման կերպով վատնել անոր խօսքին եւ անոր ապաստան ընթացքին. քանի որ անոր կամախակամութենէն է կախուած փոխել զայն ամէն մայրիկեան: Ի՛նչ պիտի ըլլային այս պայմաններուն մէջ ընկերակակն յարաբերութիւնները: Ի՛նչպէս կ'որոշ էր գոյութիւն ունինալ սուստաբար՝ նորով վատնութիւնը, պատուաւորութիւնը այնքան մեծ դեր կը կատարին, ի՛նչպէս կընայինք մեղք մտերիմ բարեկամները նտորք եւ ի՛նչպէս խորհուրդներ ունենալ մեր ամենէն թաքուն գիտաւորութիւնները անոնց յայտնելու եւ անոնցմէ խորհուրդ խընդրելու համար: Այդպէսով ընկերակամութեան բարոյապէս եւ ներթափանց կը քաջացուէր եւ մարդիկ պարտաւորուած կ'ըլլային վերագաւառով մայրնիներու տոնտանակն վիճակին, ուր վատնութիւնը գոյութիւն չունինալով ամէն մարդ իր պէտքերը անձնապէս կը զոհացնէր ինչն իրեն բաւելով:

Այս ամենը ցոյց կուտայ թէ նոյն իսկ ամենէն համոզուած ազատակամները գործնականին մէջ կը խորհին, կ'սպրին. կը գործեն իրեն հիմարէս պատճառաբանութեան, ապա թէ ոչ ինչնք զուսանքին կուտարբով կիրարկութիւնը ամենաազատիք եւ ազեպեք հետեւանքերու պիտի յանչնէր, ինչպէս տեսանք քիչ առաջ: Բայց այնու հանդերձ երբ ինչիքը կամքի ազատութիւնը պայտապանաւ վրայ է, խիղիս իրենց բովանդակ ուժովը կը ջանան արդարացնել եւ պայտապանել իրենց այդ համոզմանը եւ խտասպիտու համար այդ գիտակուն հիմերու վրայ հաստատուած փաստերու եւ պատճառաբանութեանք ցանցն, մեղք կ'ըսեն «Հակառակ թեր այդ ամեն ըսածներուն ներքեւնապէս կը զգանք թէ ազատ ենք այս ինչ կամ այն ինչ քանն ընելու անխորաբար եւ միեւնոյն մարդիկանին»: Այս անանկանք զգացման մը արդիւնք եղող ստարկութեան, որ պարզապէս պատրանք մըն է՝ ինչպէս պիտի ապացուցանինք քիչ վերջ: Կրնանք նոյնքան եւ նոյն իսկ շատ աւելի իրաւունքով պատասխանել իրենց. «Միթէ՛ք ձերունի մայր

մը՝ որ իր վարարանդի դաւկէն նամակ մը կը ստանայ որով իր անհուն սէրը եւ կարօտը կ'արտայայտէ ան, ապա է է ցամօքեցնելու իր աչքերը որոնք կը լեցուին արցունքով՝ արգիւնք անոր անբաւ զարդազատանքին։ Մի՞թէն աղա՞տ է սիրահարը կասեցնել արկունի բուռն կոտակները որ ի սես իր պայտելոյն իր այտերը կը դուռնպղեղին եւ սրբաբուժիչին կը բարակնեցնեն։ Ո՞վ կրնայ սպաս ըլլալ իր զայրոյթը զսպելու անարգար կերպով բարոյակնայն մահուան դատապարտուած անձի մը հոգեկան տառապանքները լսելու։ Գիւրբին է մեզ համար բազմապատկել այն օրինակները՝ որոնք շատ աւելի ընդունելի են եւ համոզելչ ընան թէ առանց պագացոյցի, առանց գիտական սրբազործութեան անձնական պայքմն մը արտայայտու թիւնը, Բայց կարծեմ թէ պէտք չունինք այն յաւելածանակն փաստերուն վրայ ծանրանալու, որովհետեւ մեզի սայնպէս կը թուի թէ մեր նստորջ յօդուածին մէջ առաջ բերած գիտական փաստերը բուական են եւ բացարձակապէս անհերքելի։

Ինչ որ առաջ կը բերէ կամբի աղատութեան պատրանքը, այն է որ, նախ, աղատկամները կ'անդգտանան այն տիկերական օրէնքը թէ՛ «Չկայ արդիւնք մը առանց պատճախի», թէ՛ հետևաբար մեր կամբը, քննական երեւոյթնման ման առնն - քննական երևուոյթներուն, չի կրնար գոյութիւն ունենալ առանց պատճառի։ Երկրորդական այնպիսի աննշան արարքները, ամէն կարեւորութենէ ըլլորովին զուրի, ուրոց պատճառները աննշանելի կը մնան, մինչդեռ մեր կեանքին մէջ ամենափոքր կարեւորութիւն ունեցող արարքները կը փընտուհեն եւ կը դանենք միշտ, Օրինակի նամար՝ ոճիւր մը զօրծուած է, իսկոյն առոր պատճառները մեր հետաքրքրութեան առարկայ կ'ըլլան մէկը, հակառակ իր սովորութեան, մեզի նկատմամբ իր ընթացքը կը փոխէ յանկարծական կերպով - իսկոյն այդ փոփոխութեան պատճառները փնտիտու կ'ըլլենք։ Բայց երբ մէկը մտքի հարցնելը թէ ինչու համար մեր մտքը սեղափոխեցինք այնինչ պարզային մէջ, յաճարս չլիտի կարենայինք ճշգիւ պատասխանել։ Նմանապէս կան չարիքացանց կրնաճոտս, բազմաթիւ հպեկան երևուոյթներ որոնց չարժատիքները ճշգիւ դանել շատ գծուարին է եւ որոնք առանց պատճառի կը թուին նախ եւ առայջ. Բայց այդ պատճառ մըն է միթէ կարծեղու թէ այդ կարգ արարքները բացառութիւն կը կազմեն այն օրէնքին որ ինչպէս սեսանք բացարձակապէս տիկերական է։

Մեր յօդուածը վերջացնելու համար մեզի կը մնայ այժմ ցոյց տալ թէ ի՞նչպէս պատահաւորականութիւնը ծնուող կուտայ ամէն մարդասիրական, ամենին վնհ զգացումներուն։

Արդարեւ, մարդկային արարքներու ճշմարտ պատճառներուն իրազէկ զատնալով կրնանք նկատելով անոնց նեղինակներուն ժառանգականութեան, միջավայրին, դատարարականութեան անմիջական արդիւնքներն եւ ոչ իրեն պտուղը անոնց ազատ կամայականութեանը, կը ստիպենք ներողամտ ըլլալ մարդկային յոյժ արարքներուն։ Ներողամտութիւնը կը զարգացնէ մեր մէջ ընկերակամութեան (sociabilité) զգացումները, կը ջնջէ ատուլութիւնը մարդոց մէջին եւ կը զօրացնէ համակրութեան ընազգները, (որոնք կ'ընդլայնեն սիրոյ սահմանները ի վնաս ատուլութեան սահմաններուն) կը զարգացնէ այլատրական զգացումները եւ սէրը յայպէտսլ առանկալելի դեր մը կը ստանայ ընկերական թատերաբեմին վրայ։ Ո՞չ ապաքէն սէրը եւ ներողամտութիւնը անբաժանաբար են, որոնք զիրար կը զօրացնեն։ ո՞ր մարդը, ո՞ր սիրահարը իր սիրոյ առարկային ներողամտ չըլլար, Սէրը այն զգացումն է որ մեր բարոյական մտախիտքը պէտք է ըլլայ, որ մեր կուտումն է՝ եթէ կարելի է այսպէս ըսել, որուն համար սահմանուած ենք մենք, (տողայ՝ մեր ծնողքը կը ստանա, երկտասարդ՝ կիներն է որ մեր սիրաբ կը բարակեցնեն, այեւոր՝ մեր որդիքին են որ մեր պաշտամունքին առարկայ կը դառնան)։ Ինչպէս անհատական յոյնպէս եւ ընկերական կրանքին մէջ մարդս յաջողութեամբ սիրած է իր ընտանիքը, իր ցեղը, իր ազգը եւ պէտք է հասնի իր մտատկարարին, այն է սիրել մարդկութիւնը՝ առանց աղդայնական խտրութեան։ Այս մտատկարը իրազործելու համար ամենաարեւոր պայման մըն է պատճառաւորական վարչապետութեան ծաւալումը, ինչպէս սեսանք։ Նմանապէս արդարութեան կը դատարարականութեան տեսակետով, արդիւնք պատճառաւորականութեան ամենամեծ դերը կատարելու հրուած է, ինչ որ մեր յաջող յղուածներուն նիւթը պիտի ըլլայ։

ՏՐ . ՏՐԻԱՍ ԵՍԱՅԵԱՆ

Պեղէ

